ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՀԲՄԱՊՁԲ-4/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

26.09.2019թ.
ժամը 15:30

Մասնակցում էին՝

Գնահատողներ

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ պետ գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ)
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան:
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյանը:

Գնումների համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Հակոբյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ՀԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովինիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Հակոբյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2."ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/1" ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա "ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/1" ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել մեկ մասնակից.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Արպանիվ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

30.09.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց գնահատման աշխատանքները:

2. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

(Գ. Հակոբյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած բոլոր փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվ ել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Հակոբյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից՝

Չ/Հ	Անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախ հաշվ. գինը	«Արպանիվ» ՍՊԸ»-ի գնային առաջարկ		1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ
					առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	
1	Անվադող 12.00 R20	դրամ	1	10 800 000	8 858 280	1 771 656	«Արպանիվ» ՍՊԸ»-
2	Անվադող 12.00 R24	դրամ	1	10 380 000	9 381 900	1 876 380	բանակցություն

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/1»** ծածկագրով 2 -րդ չափաբաժնի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները որոշեց գների նվազեցման նպատակով 03.10.2019թ. ժամը 14:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Բանակցությանը հրավիրվել է **«Արպանիվ» ՍՊԸ»- ն:**

03.10.2019թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց գնահատման աշխատանքները

3.4 03.10.2019թ. ժամը 14:30-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցություններին ներկայացավ «Արպանիվ» ՍՊԸ-ի տնօրենը: Վարված բանակցությունների արդյունքում «Արպանիվ» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով իր կողմից առաջարկված ԱԱՀ-ով 11 258 280 ՀՀ դրամը բանակցության արդյունքում նվազեցրեց սահմանելով՝ ԱԱՀ-ով 10 380 000 ՀՀ դրամ:

Բանակցության արդյունքում սահմանվեց հետևյալ գները՝

Չ/Հ	Անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախ հաշվ. գինը	«Արպանիվ» ՍՊԸ»-ի գնային առաջարկբանակցության արդյունքում		1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ
					առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	
1	Անվադող 12.00 R20	դրամ	1	10 800 000	8 858 280	1 771 656	«Արպանիվ» ՍՊԸ»-
2	Անվադող 12.00 R24	դրամ	1	10 380 000	8 650 000	1 730 000	«Արպանիվ» ՍՊԸ»-

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Հակոբյան)

4.1 07.10.2019թ. "ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/1" ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Արպանիվ»ՍՊԸ»-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու "ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/1" ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ. Հակոբյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Հակոբյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-4/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Կարապետյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Դ. Սերոբյան
Գնումների համակարգող՝	Գ. Հակոբյան